

891.99.0926m2  
U-82



70-26+

13 APR 2011

ԴՐԱՄԱՑԱՆԻ ՍՈՅԻԱԼԻՆՑԱԿԱՆ ՓԵԳԵՐԱՑԻՒ ԽՈԽՀՐԱՑԻՆ ՀԱՄԱՊԵՏՈՒԹԻՒՆ

891-39-092 ՀԱՅԿԱԿԱՆ  
ՊՐՈՊՐԵՏՈՐԻ բոլոր երկրների, ժիացեք.  
Մ-82

ՎՐ.

Ա. ՄԱՐՏՈՒՆԻ. Զ

# ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ՀՐԱՄԱԿՈՒԹԻՒՆ

№ 32 ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՍԻՒԱՐԻԱՏԻ  
ԽՈԽՀՐԱՑԻՆ — 1919

№ 32

891.99.092  
Է-19 Մ.

Հայաստանի Կոմիտենիստական Կուսակ. և Հայկական Գործերի Կոմիտարիատի հրատարակութեամբ լրյա են տեսել՝

- 1) Ոռուսաստանի Սոցիալիստական Փեղեատիւ Խորհրդային Համագովառութեան Մահմանադրութիւնը.
- 2) Ն. Լենին. «Նախակ Ըմբռէկեան բանտիւններն»—զինը 1 ր.
- 3) Վ. Փրկշե. «Պրոլետարական պօքանին»—զինը 3 ր.
- 4) Զիշերնի. «Բէհատից յանոյ» (Գնկուցու Խորհրդանշների 5-րդ Համագումարին) —զինը 1 ր.
- 5) [REDACTED] առ 1 մաս 2 մաս 3 մաս 4 մաս 5 մաս 6 մաս 7 մաս 8 մաս 9 մաս 10 մաս 11 մաս 12 մաս 13 մաս 14 մաս 15 մաս 16 մաս 17 մաս 18 մաս 19 մաս 20 մաս 21 մաս 22 մաս 23 մաս 24 մաս 25 մաս 26 մաս 27 մաս 28 մաս 29 մաս
- 6) Ն. Լենին. «Կարէ Մարք» (Համառու կենսագութիւնը և Մարքսիզմի շարագութիւնը)—զինը 3 րուր.
- 7) [REDACTED] առ 1 մաս 2 մաս 3 մաս 4 մաս 5 մաս 6 մաս 7 մաս 8 մաս 9 մաս 10 մաս 11 մաս 12 մաս 13 մաս 14 մաս 15 մաս 16 մաս 17 մաս 18 մաս 19 մաս 20 մաս 21 մաս 22 մաս 23 մաս 24 մաս 25 մաս 26 մաս 27 մաս 28 մաս 29 մաս
- 8) Հ. Շահումյան. «Կոմիտենիստների ծրագիր»—զինը 10 ր.
- 9) Մ. Պահլումիջ (Վիլյումն) «Ամիան և իր զերը համաշխարհային պատերազմի մէջ»—զինը 7 ր.
- 10) [REDACTED] 1 մաս 2 մաս 3 մաս 4 մաս 5 մաս 6 մաս 7 մաս 8 մաս 9 մաս 10 մաս 11 մաս 12 մաս 13 մաս 14 մաս 15 մաս 16 մաս 17 մաս 18 մաս 19 մաս 20 մաս 21 մաս 22 մաս 23 մաս 24 մաս 25 մաս 26 մաս 27 մաս 28 մաս 29 մաս
- II. «Կարէ Լենինին» (Լենինինի նկարով)—զինը 1 ր.
- 11) «Եռորդային Կառավարութեան նոտան Դիլացնին»—զինը 1 ր.
- 12) «Միամական աշխատանքային պարոցի կամոնադրութիւնը»—զինը 2 ր.
- 13) Հ. Յովհաննես. «Դէպի բարձրացնական կոր»—զինը 1 ր.
- 14) [REDACTED] «Ն. Լենին» (Վահագուր)
- Իւթէ Ամիան ()—զինը 2 ր.
- 15) Մ. Մարքս և Փ. Էնցել. «Կոմիտենիստական Մանիֆեստ» Պետականի, Կանոնադրութեան առաջարկման նորոգումը—զինը 10 ր.
- 16) Վ. Լափարջ. «Տար համար Բարիցիան և Կոմիտենիզմ»—զինը 2 ր.
- 17) [REDACTED] —զինը 2 ր.
- 18) «Քրամական Միծ Յեղափոխութիւնը»—զինը 3 ր.
- 19) Վ. Կըրժենցի. «Խն չպէս վարել ժողովը»—զինը 3 րուր.
- 20) Կ. Երեմենցի. Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութիւն «—զինը 2 ր.
- 21) Կըրժիսկի «Ո՞ւ ճան է ը դուք գիշացիր»—զինը 1 ր.
- 22) Վ. Ավանինցի. «Հայ ժամանականներն»—(Ժող).
- 23) Ոռուսաստանի Կոմիտենիստական Կուսակութեան (Յուշեմիների) ծրագիր—զինը 3 րուր.
- 24) Երբորդ Խն տերնացիօնակի Պատաքարման—զինը 1 րուր.
- 25) Ն. Լենին. «Թէզիմն եր բուրժուական և պոլիտիկական զիմովարիայի մասին»—զինը 3 ր.
- 26) «Հայաստանի Կոմիտենիստական Կուսակութեան ներկայացուցիչ զիմուցումի Ա. Կոմիտենիստական հնտերնացիօնակի Մանիֆեստը ամրող աշխարհի պոլիտիկարիատին»—զինը 1 ր.
- 27) «Կոմիտենիստական հնտերնացիօնակի Մանիֆեստը ամրող աշխարհի պոլիտիկարիատին»—զինը 1 ր.
- 28) Ն. Լենին. «Երբորդ Խն տերնացիօնակի տեղը պատմութեան մէջ»—զինը 1 ր.
- 29) Ն. Լենին. «Ի՞նչ պէտք է մասի մեր կուսակցութեան անունը»—զինը 1 ր.

Պրոլետարներ բոլոր երկրների, ժիացէք.

391.99.092

Հ-19 հ.

Ա. ՄԱՐՏՈՒՆԻ.

## ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ՀՐԱՅՐԱԿՈՒԹՅՈՒՆ

№ 32 ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ № 32  
ԹՈՎԿԱ—1919

## ՄԻՔԱՅԻԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

(Նատողութիւններ)

## I.

«Նալբանդյանը իր ժամանակի երիասարդութեան փառքն էր և այսօր էլ ընդհանուրի համար մի նւյրական հասկացողութիւն է դառնել զլխաւորուպէս իրեւ բանաստեղծ։ Նալբանդյանը հայ գրողների մէջ այն տարօրինակ ճակատագիրն ունի, որ նրա գրական գործերը երբէք չիրատարակւեցան առանձին մի ժողովածուի մէջ։ Ցրւած են այդ գրւածքները այժմ բալորովին հազւագիւտ պարբերական հրատարակութիւնների մէջ։ Կարելի է հաստատ ասել, որ նրա հրապարակախոսական յօդւածները (որոնք այնքան էլ շատ չեն, ոչ էլ շատ բավանդակալից ու բազմակազմանի) ոչ ոք չէ կարգացէլ, Բայց Փառը կու, որովհետև ընթերցողը գտնում է նրա ստանաւորները երգարանների մէջ, կարդում է, ողեորշած երգում, և Նալբանդյանը նրա սիրելին է» (ընդգծումները մերն են - Ա. Մ.): Այսպէս է դատում Նալբանդյանի մասին պ. Լէօն իր «Ռուսահայոց գրականութիւնը» գրւածքում։ Ճիշտ է դա։

Նալբանդյանի «ճակատագիրը» դադարել է աարօրինակ լինելուց։ Ինչպէս յայտնի է, 1906 թ. լուս տեսան-թէկ անհունի ու ան շնորհը հրատարակութեամբ։ Նրա համարեալ բոլոր երգերը (բացի նամակներից ու մի քանի յօդւածներից) ամփոփւած երկու մեծ հատորներում։ Բայց մենք մինչև այդ էլ ոչ մի տարօրինակութիւն չենք գտնում նրա «ճակատա-

6387  
39

գրի» մէջ չեն եզել և չկան միթէ և ուրիշ հայ գրողներ, սրոնց երգերը չեն հրատարկւում ոմիտօփ կերպով։ Տարօրինակութիւնը պէտք է մի այլ տեղ փնտրել - տարօրինակը հայ գրականութիւնն է. թերես և նրա պատմիչները։ Նոր ժամանակների ռուտահայ ամենաառաջնակարգ գրական դէմքը հերթում է որպէս հրապարակախօս և բանաստեղծ է յայտաբարւում. սա տարօրինակի թիւրիմացութիւնն է։ Նոյնպիսի յաջողութեամբ բանաստեղծ կարելի է համարել և նազարեանին, Արօվինանին կամ Ռաֆֆուն, որովհետեւ նրանք էլ են նալբանդեանի նման ոտանաւորներ գրել. Սակայն դա նշանակում է լինել բանաստեղծ։ Նալբանդեանը՝ բանաստեղծ, որի ուանաւորածեւ գրական որտաղրութիւնները ամենաառաջ դեղարւեստական գործեր լինելուց հեռու են։ Այնտեղ նա լոկ արծարծում է իրան ալնքան լատուկ, այնքան բնական հրապարակախօսական գաղափարներ։ Սակայն... տեսէք, որ այդ կողմից նա ալնքան էլ «բովանդակալից» ու «բազմակողմանի» չէ։ Ակզպէս կարող են կարծել այն մարդիկ, որոնք նալբանդեանին ամենենին չեն կարդացել. իսկ գրանց տեղը շատ է իհարկէ։ Բայ պկ. Լէօն վկալութեան մեզ մօտ ամենքն են այզպէս. գա գօնէ 1903 թ. էր, երբ գրել է նա իր վերոյիշեալ աշխատութիւնը։ Հետաքրքիր է իմանալ՝ պ. Լէօն իրան էլ և վերագրում այդ մարդկանց թիւն։

Խօստովանամ, նալբանդեանին մեզ մօտ չըիտեն. իմացողներն էլ նրան չեն հասկանում. այսուեղ ցաւք կրինապատկւում է. նազարեանի հետ միաժամանակ լիշտում է նալբանդեանը. հայ լիրերայների անւանաշարքում լիշտակւում է և նալբանդեանի անունը. գրականութեան մէջ նրան համարում են հայ ռահերաներից մէկը։ Ճիշտ է, նա մի ժամանակ տարել է այն կախւը, ինչ որ նազարեանը և ուրիշները։ Նալբանդեանը որոշ ժամանակ մտածել է այնպէս, ինչպէս և նրանք սակայն որո՞շ ժամանակ և ընդհանուրից մի քիչ առընթեր ձևով։ Դրանից դուրս, իր կեանքի ամենա- բնագմնաւոր և ամենահասուն շրջանում նա ներկայանում է մեզ որպէս այլ գաղափարների տէր մի մարդ, որը տարբեր-

ուում է նազարեանից ու լիբերալներից։ Եւ մինչեւ վերջն էլ նա արդպէս մնաց։

Կարո՞ղ էր միթէ նազարեանական շրջանը կամ լիբերալիզմը, այն էլ հայկական լիբերալիզմը, մնել իրանից նալբանդեանի նման պրօդրեսիւ միտք և ըմբոստ ողի։ Ու այդ մտքիովու տէրը մեր մտաւորական կեանքի առաջին ու միակ բազմաչարչար դէմքը դարձաւ։

Մեր հասարակական մորի անպայման ամենահետաքրքիր ու մեղ համար շահեկան դէմքը։

## II.

Միքայէլ նալբանդեանը կարճ ժամանակում լաւ հրապարակախօսի անուն վաստակեց։ Եանթահար «Հիւսիսափալլոր» տպրում էր գլխաւորտպակս շնորհիւ իր տագանդաւոր աշխատակցի։ Ո՞վ էր և ի՞նչ էր ներկայացնում իրանից այդ իսկապէս տաղանդաւոր երիտասարդը։ Նալբանդեանին գիտէին, որովհետեւ մինչեւ «Հիւսիսափալլոր» երեան գալլ նա այզպէս ասած, յանձնարարւել էր արդէն, այն ինչ նալբանդեանը, որ թէն ունէր գրական նախափորձեր, յամենայն գէտս տակաւին անձայտ անձն էր։

Աղքատ ընտանիքի զաւակ է նա՝ իր երիտասարդութեան առարիները անցկացրած Ն.-Նախիջևանի խուլ պտաերի մէջ Այդ քաղաքը, մանաւանդ այն ժամանակները, տպրում էր միանգամայն մեկուսացած կեանքով։ Թէ բարբառն ու ոսվորութիւնները, իր բարբերն ու նաշակը, սոսկ տեղական հոգուներ պահանջներ. և այդ ամենը, Գօգօլի տրապայտութեամբ, չէր անցնում նրա ունիտական պատերից այն կողմ։ Կատարեալ նահապետական դրութիւն իր բնորոշ քաղքենի յատկութիւններով։ Աղքատ կեանքն ու նրա երեսլթները զուտաեղալին բնովթ էին կրում. Կատարակական աննշան խնդիրներ, յայն բնաւորութիւն կրօղ հարցերի բացակայութեան պատճառով, մեծ աղմուկ հանում և խոշոր ծաւալ էին ստանում։ Խորութիւնն ե ընդարձակութիւն չունէին նրանք և տարբեր ասպարիզում անընդունակ կինէին փոթորիկներ յարուցանել

և կրքեր լուղել: Թերևս այդպիսիներից էր տեղական եկեղեցական գումարների հարցը, որ մի շաբթ այլ մտեր մունր խնդիրների հետ միասին իր շատրջն էր տառաջ բերել ու գուրս հանել երկու կուսակցութիւններ, որոնցից աւելի ուժեղի կենտրոնական ֆիզուրան էր կազմում հասարակութեան փչացած տիպերից մէկը՝ աղա խալիպեանը:

Նալբանդեանը 18—19 տարեկան էր, միակ «սիսակնմառիք» կրթութիւնը (որ տարրական է եղել) ստացած Պատիանեան քահանանոյի մօտ և այդ պաշտով կեանք մտած (որպէս սովորական ժամասաց տիրադու), երբ եկեղեցական գումարների խնդրին անմիջական մատնակցութիւն է ցոլց տալիս: Երիտակ երիտասարդի զգացմաւնքները աւելի քան վրգովւած էին: Հառարակական գումարները խժող Խալիպեանի գէմ էին ուղղւած Նալբանդեանի զայրովմի սուր սլաքները: Երիտասարդը ժողովրդականութիւն է ձեռք բերում. նա կուսակիցներով է պատում իրան: Սակայն միւս բանակը լուռ չի մնում: Նա չի կանգնում. ոչ մի միջոցի առաջ՝ իր հակառակորդներին լռեցնելու համար: Բանը առնտեղն է հասնում, որ բարձրագոյն հոգեսոր իշխանութիւնը Նալբանդեանին հալոժանքի է ենթարկում:

Նրան մի ելք է შնում: Եւ 1853 թ., 24 տարեկան հասակում, Նալբանդեանը՝ տիրացուութիւնը մէկընդմիշտ թողնելով անցնում է Մոսկվա:

Այսուեղ նւիրուում է նա ինքնակրթութեան, համալուրանի ազատ ունինդիր գրւելով, Յ տարի շարունակ ուսումնասիրում է նա բնական ու բժշկական առարկաները, գրադաւում է և հումանիտար գիտութիւններով. գրականութիւնը, պատմութիւնը, փիլիսոփայութիւնը և նոյնիսկ տնտեսագիտութիւնը նրա սիրած պարապմունքներն են եղել Այսուեղ է նա լուրջ կերպով ուսութեասիրում Բելինսկուն և 60-ական թւականների ուսուական մտքի ոռաջնակարդ ներկայացուցիչների գրւածքները:

1856 թիւն է Նալբանդեանը միտք է լղանում օրդան հիմնելու. դա արդէն այն անհրաժեշտ մօմենտն էր, որ կանգ-

նել էր հայ վերածնութեան գուան: Այդ բանը շատովի վլուխ չի գալիս: Աւելի լաւ: Նալբանդեանը հնարաւորութիւն է ունենում իր պարապմունքները երկարելու, իսկ նա պարապում էր անընդհատ և իստենուի կերպով:

Այդ բոլորի հետեւանքն այն է լինում, որ Նալբանդեանը վերջոյ ձեռք է բերում բաղմակոմանի կրթութիւն և բաւակտնին կիթալոր գիտական պաշար: Նրա աշխատութիւնները կարգախիս մարդ զտրմանում է, թէ ինչպէս կարող էր մեզ մօտ 60-ական թւականներին, այն էլ մի ինչ որ նախկին տիրացու, ապրած աննպաստ պարմաններում լաւ պատրաստւած մի գիտական ոլժ դառնալը:

Ինչեիցէ: Ահա 1858թ. սկզբին Ս. Նազարեանի հետ միամին նա հիմք է գնում «Հիւսխափալլ» ամսաթերթի հրատարակութեան, որա ամենաեռանդուն, աչքի ընկնող և նշանաւոր աշխատակիցը Նալբանդեանն է լինում: Մի տարի և ուելի նրա էջերում արժարծում էր Նալբանդեանը մի շաբք գաղափարները, որոնք գալիս էին խորտակելու կղերականութեան և խաւարմատութեան կամ, ինչպէս ինքն էր ասում, օրսկուբանտների կիսախարխուլ ամրոցները:

Հայիական վերածնութիւնը իր խորիսին է դյում: Եւ Նալբանդեանը այդ աշխատանքում որոշ դեր է կատարում:

### III.

«Այսուհետեւ ոչինչ եղիպատական խորամանկ քրմեր, որ կամէին լինել գիտութեան միակ պահապանքը. այսուհետեւ ոչինչ չինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ. այսուհետեւ լոյս և ճշմարտութիւն բարելունեան գերութիւնից», քարոզում է հայիական գերածնութեան ամենախոշը ներկայացուցիչը՝ Նազարեանցը: Այսպիսի յայտաբարութեամբ ասպարէզ իշու վերածնութիւնը, որ եկել էր կղերական իշխանութեան և իշխորդիալի գէմ մաքառելու:

Հայ կեանքն էլ է ունեցել իր միջնադարը: Ինչպէս և պիար էր սպասել, նա շատ ուշ է սկսում փոխել նոր

տարի: Երկար ժամանակ միջնադարին առն տւազն եղել է կղերը: Անշուշտ իր պաշտօնին նա հրաւիրւած է եղել բնական և օրինական ճանապարհով, նոյն ձեռք նոր դարեշրջանի իրերի արածաբանութիւնը աւելորդ է համարում այլ ևս հոգեսրականութեան գերիշխանութիւնը: Նոր կեանք ու նոր հասարակատարրեր: Կղերի առաջնութիւնը, յետաղիմական ոգին ու կղերական իդէօրդեան արխիւի առարկաներ են դառնում: Մարդիկ սկսում են լուսաւորեալ կարգերի ու նոր պահանջների անունից ֆառեր: Աճարց ազգի մարմինը ունի իր վրայ ապականւած տեղեր. դրանց քսել անաչառապէս և ի բաց կարել սուր գանակով չպիտի վախենալ գիտութիւնը և մարդկաւթեան բարեկամը»: Եւ խսկապէս որ՝ «ապականւած տեղեր» կալին, շատ կալին:

Լեզւի խնդիրը վերածնութեան առաջադրած խնդիրների արտարարտիչը հանդիսացաւ: Հին լեզուն՝ գրաբարը պէտք է տեղի աար աշխարհաբարին: Վերածնիչները բէֆօրմների առուր ալգուեղից էին բռնել:

Խոշոր բարենարոգութիւնների էր կարօտ և եկեղեցին: Նրան առաջարկւում էր հրամանատարի դերը թօզնել և, ենթարկեալի պաշտօնը ստանձնելով, սոսկ կրօնական պէտքերին ժառանքը:

Գրականութիւնը մերձենում է կեանքին, ժողովրդական խաւերի կեանքին:

Վերջապէս կրթութիւնն ու դպրոցական գործը նոր հիմքերի վրայ են դրւում: կղերական ոգին ու խալիֆայական մեթօդը աշխատում են դպրոցներից գուրս վռնդել:

Թարմ ու աշխարհիկ առարկաներ են մուաք գործում այնաեղ, գաստանգութեան համար պիտանի գիտելիքներ են հաշում մատեմատիքան, բնական գիտութիւնները, պատմութիւնը, հասարակական գիտութիւնները, նոր ու հին լեզուները և այլն:

Վերածնութեան դարը սովորաբար շփոթում են լիբերալիզմի շրջանի հետ: Ճիշտ է, լիբերալիզմը վերածնութեան զաւակն է, առաջինը մասնաւորացրած ձեռք, in concreto բ-

րոզում էր երկրորդի կղեաները, որոնք, օրպէս ուղեցայց ձօղեր, նկարւած են եղել վերածնիչների կողմից: Այդ բոլորը ճիշտ է. բայց չպէտք է մոռանալ, որ վերածնութեան կպօխան այն չէ, ինչ որ 70-ական կամ 80-ական թւականներն են եղել. այլ են վերածնիչները և այլ լիբերալները, աարբերութիւն, նկատելի աարբերութիւն կայ նազարեանի ու Արքունու միջև:

Որտե՞ղ է աարբերութիւնը:

Վերածնութիւնը կանգնած էր ժամանակի հասարակութեան առաջադէմ խաւերի շահերի տեսակետի վրայ. այդ խաւերն էին՝ առետրական դասը, լայն գէծոկրատիան և լրսաւորեալ ինտելլիցիանցիան: Նկատենք, որ նրանցից ամենառութեղն և պրեանզաներ ունեցողը նոր-նոր կազմաւորւող բուրժուազիան էր:

Այդ լայնամաւալ մասսան ունենալու էր բաւականին ընդարձակ ծքագիր: Վերջինս ներշնչւած էր գէմօկրատական ոգով: Դասակարգակին շերտաւորումը հայերի մօտ 50-ական թւականներին տակաւին թուլ էր, բացի այդ՝ կախւը տարւում էր մի լայնի խաւի դէմ, որից անբաւական էր մեացեալ ողջ հասարակութիւնը: Մարտի գաշտում վնասում էր հակատագիրը այն կարգի, որի խօրտակումով շահագրգուած էր ընդհանուր հայութիւնը մինուս կղերը: Պարզ է, որ այդ օրինակ հանգամանքներում շարժումը կրելու էր լայն կերպարանք:

Նազարեան դրել է պահանջներ, բարողել է գաղափարներ, որոնք պէտք է վերաշնէին հայ կեանքը. իսկ թէ վերահաստատւած կեանքը այնուհետեւ ինչ կօնկրետ արտայալութիւն կստանայ, ինչ գործնական բայլեր կանէ կամ ինչ շօջափելի նախաձեռնութիւններ կկատարէ՝ աւելի բէալ զիրք ստեղծելու համար, այդ ամենը գուրս է եղել հայ ազատամտութեան նախակարապեանների հալեցաշրջանից: Դրանք մի շարք իրական ծրագրներ էին, բզիսած այն խաւի ծոցից, որ յաւակնութիւն ունէր իրերի ղեկը իր ձեռքը վերցնելու. Բուրժուազիան էր դա, որ 80-ական թւականներին

կարողացել էր արգեն կազմաւորւել և իր իդէօլօգիան ունենալ: Բուրժուազիան իր լետեռում ունենալով վերածնութեան կատարածը - զբաւած զիրքերը, այժմ շանում էր այն ամրացնել ու ապահով կացուցաներ:

Գրիգոր Արծրունին դեռ 70-ական թւականներին կազմած ունէր իրական քայլերի ուրաւղիմք: «Թլխաւոր պահանջմանը է մեղ համար ուրեմն - զրում է նա ալդաեղ - զիտութիւն տարածել մեր մէջ մեր գործնութիւն աշխատանքն օրինաւոր կերպով կատարելու համար: Եթէ ոչ, երբ կշինւեն մեր երկրում երկաթուղիներ, երբ մեր երկիրը աւելի յայտնի կլինի երողացիներին, նրանք կդան մեր երկիրը, կհիմնեն դորժարաններ, և գիտնական մարդիկ լինելով, իրանց գումարները մեզնից լաւ կառավարել դիտենալով, մեր բնական արդիւնքները կպատրաստեն առաւել մեծ քանակութեամբ, առաւել մաքուր, առաւել առողջ, վաճառաշահութեան առաւել յարմար արգիւնքներ: Այսպէս որ հայերին խնդրակցութիւն (մրցակցութիւն) կանեն, հոգերի ձեռքից գումարներ կիւն»:

Այսպէս էր բարբառում հայ ազատամտականութիւնը: Այլ բան էր պատգամում հայկական վերածնութիւնը: Կրկնում ենք. նրանց մէջ կայ սերտ արիւնակցական կապ. բայց դա չի խանգարում ալդ երկու երեսիները իրարից տարբերել:

Մեր Վերածնութիւնը մօտենում է ոռուսական լուսաւոր դարեշրջանին՝ Թելինսկիների, Չերնշեսկիների էպօսացին: Այն ինչ լիրերակզմը, բաւրժուազիայի զուտ իդէօլօգիան լինելով, ունի իր որոշ անդն ու ժամանակը: Վերածնութիւնը մեղ մօա լիրերակզմի նախադուռն է եղել, նրա շփոլան:

Միևնույն ժամանակ այնտեղից գուրս են հկել այնպիսի մտքեր որոնք երբէք չեն կարող հաշտւել բուրժուական մտածողութեան ու լիբերալական ակալիառութեան հետ:

## V.

Բաւական է թերթել Նալբանդեանի իր գրական գործունէութեան առաջին շրջանին վերաբերեալ յօդւածները: որպէսզի նրա բէֆորմիզմը աչքի զարնէ: Եւ իրօք: Այստեղ վերլուծում են հայ կեանքի սովորական և առօրեայ երեսպաթները շօշափող մի շարք խնդիրներ: Գլխաւոր շանթերը նա ուզգում է իհարկէ կզբրականութեան դէմ, խարազանում է հոգեսոր զասի պակասութիւնները, գատափետում ու զասապարտում է նրան: Նալբանդեանի պահանջն է, — ամեն ինչ ժողովրդի համար և ամենայն ինչ նրա միջոցով:

Բայց ո՞վ է այդ ժաղովուրդը: Նրա համեմատաբար ուժեղ խաւը, զէպի որը սովորաբար ուզգած են լինում յուսահատ աչքեր: Ահա՝ կարդացէք: «Ու՞ր են աղջային դպրոցները, ու՞ր են ազգի իշխանները ի ալս մասին հոգաբարձութիւնը» (ընդգծած մերն է. — Ա. Մ.), բացականչում է Նալանդեանը:

Ամենից առաջ լեզւի և զբականութեան հարցն է Նալբանդեանին զբաղեցնողը, մի հարց, որի համար նու նիզակներ է շարդել: Նալբանդեանը դանդատում է, որ հայ զրականութեան նիւթ մատակարարողը էֆիմերդէն կամ օրացուցներն են. դա սարեղայական մատենագրութիւնն է. և առաջարկում է նա զրականութիւնը միանդամայն նոր հիմքերի վրայ դնել:

Նոյնը և հայ ընտանիքի նկատմամբ: Հայ կնոշ ազատագրման, հետևաբար և հայ ընտանիքի աղաւ զարգացման ոկզրունքն է առաջադրում նա. չէ՞ որ արդի ընտանիքը ժողովրդի բունն է:

Ընտանիքից անցնում է նա դպրոցին Այստեղ յանձնաբարում է զասաւանզել լինական գիտութիւններ, մատեմաթիքա, օրէնսգիտութիւն, բաղաբանական թիւն, մեքենագիտութիւն, լեզուներ ևալին, այլ և առաջարկում է ժողովրդի լուսաւորութեան գործը կենսաւակ ոյժերի ձեռք տալ աթուղթ հոգեսորը պարապեն աստւածացին բանի ուղղա-

միտ վարդապետութեամբ, բայց աղջի լուսաւորութիւնը զիտոյ է յառաջանալ բուն ահջի հոգաբարձութեամբ»:

Մեր ծրագրից դուրս է-ծանրանալ Նալբանդեանի բէֆօրմիստական դործունէութեան վրայ: Բաւականանանք սրանով միայն:

Եւ միմիայն ախքանը իմանալով դժւար չէ ասել, թէ նալբանդեանն ո՛վ է ու ի՞նչ է ներկայացնում: Այդպէս և վարում և պ, Լէօն: Նա իր մի փաքրիկ յօդւածում, որ զետեղած էր Ե. Թոփչեանի խմբադրութեամբ լոյս տեսած ժողովածւի մէջ, գտնում է. «Նալբանդեանցն էլ, պէտք է ասել նոյնպէս առանձնապէս սասանեցնող ծալրայեղ մտքերով չէր հանդէս գալիս «Հիւսիսափալլի» էջերում: Ճիշտ է, նա սաստիկ յարձակւում էր տիրող մեծատունների վրայ, բայց այդ արշաւանքի մէջ աւելի անձնական վերաբերմունք էր երեսում, երբեմն նաև մանր մունք հաշիւներ: Իսկ ընդհանուր հասարական հարցերի մէջ նա նոյնպէս, թէև աւելի խիստ խարազանող լեզով, անարգ սիւնին էր բեկառում խուար երեւոյթները և պահանջում էր վերանորոգութիւն: Հայ կեանը ի հիմունքները նա չէր իսորոտ ակում» (ընդգծ. մերն է, Ա. Մ.):

Հիմք կա՞լ արդեօք «անձնական վերաբերմունք» ու մանր մունք հաշիւներ» նկատել. իհարկէ ո՛չ: Իսկ ի՞նչ է ներկայացնում իրանից Նալբանդեանի ոգու ուղղութեան, այդ գնահատութիւնը: Նա բաւականին մակերեսալին է. աւելին կասենք՝ նա միանգամայն սխալ է: Այն, ինչ որ մենք մինչև այժմ ասացինք Նալբանդեանի մասին, կարող է խսկապէս համաձայն լինել պ. Լէօնի արած դիահատումին: Բայց մենք դեռ բան չենք ասել Նալբանդեանի մասին. ասելիքը առաջում է: Պ. Լէօն կամ չի հասկացել Նալբանդեանին, կամ թէ չի չի ուզում հասկանալ. չէ որ բաւականին վտանգաւոր բան է նբան հասկանալը: Եւ կարծես թէ պ. Լէօն գուշակում է այդ վասնզը: Ապա թէ ոչ ինչու են դրւած այդ տողերը. ինչ կարիք ուներ նա պնդելու՝ ոչայ կեանքի հիմունքները նա չէր խորտակում»:

Դողտնիքն էլ հէնց ալսուել է:

V.

Նալբանդեանը 1859 թ. սկզբին արտասահման է ուղեարւում: Այնտեղ ժանօթանում է նա ժամանակի հասարակական հօսանքներին: Նրա մտաւոր հորիզոնը քնզլայնում է:

Եւ ահա արտասահմանում կատարւում է մեր հրապարակախօսի գարձը. երա դաղափարները այլ ևս այլ ուղղութիւն են սատնում:

Այդ բանին արձագանք պիտի համարել այն, որ նոյն թւի վերջին Նալբանդեանը գտրարում է պաշտել մինչ ալդ իր համար գնահատելի կուռքերը: Ահա թէ ի՞նչ է ասում այս մասին նրա կենսագիրներից մէկու. «1859 թ. հոկտեմբերին Նալբանդեանը վերագառնում է Ռուսաստան և «Հիւսիսափալլից» վերջնականապէս բաժանուելով՝ Պետերբուրգ է գնում: Որքան և սկզբնապէս Նալբանդեանի ու Նալբանդեանի մէջ մտքերի համերաշխութիւն լիներ, այնուամենալին այս երկու ապրեր խառնւածքներն ու մտքերը կարող չէին հաշտ մնալ. մէկը մեզմ էր, չափաւոր, միակողմանի գաղափարների տէր, սկսեակի մարդ, միւսը աաքգլուխ, պատերազմող, աւելի լայն հայեցքների տէր, կեանքի մարդ» և այլն այս իմաստավի Խոյրի արմատական կողմը, որքան էլ նա ակնյալտ լինի, վրիպել է կենսազրի ոչըից. սակայն և «սկզբնապէս» բառը մատնել է նրան:

Համերաշխութիւն կար իսկապէս սկզբնական շրջանում: Այնուհետեւ նա ունի է տալիս գաղափարների ապրերութեան:

Դեռ այն ժամանակ «լիբերալ» Նալբանդեանք, կարծեարնազմամբ, արայալառում էր այնպիսի պողիտիւ մտքեր, որոնցից մեր սօվորական բուրգութեան դրողները միշտ հեռու են եղել: Մի աեղ նա հարց է տալիս. «Մի մարդու առաքինի կամ վաթմար լինելու շարժառիթը գտնւում է նոյն այդ մարդու մէջ, թէ» նրա շրջակայ ընկերութեան մէջն. և առանց առանցւելու պատասխանում է. ամարզը ձնանելով չունի իր մէջ առաքինութեան կամ վաթմարութեան սկիզբն կամ աարը, և հոգու այդ ունակութիւնը հեաւանք են նրա լաւ կամ

վաստ շրջակալքի աղդեցութեան): Մարգր, ալդ ահասարակական անասունը՝ կերպարանաւորւում է իր հասարակութեան ծոցում և նրա ազդեցութեան տակ:

Այս մաքրից մատերիալիստական հոտ է բուքում. նա պարունակում է իր մէջ տոռղջ սաղմեր, որոնք ապագայում աւելի զարգանալու ու բեղմնաւորւելու էին: Եւ ալդպէս էլ եղաւ: Նալրանդեանն անցաւ Ռուբիֆոնը, որ ախուհետե մի ոնչրպետ դարձաւ մի կողմից նրա, իսկ միւս կողմից՝ Նաղարեանի ու առհասարակ վերամիջների և ազատամտականների միջև:

Սակայն դառնանք նալրանդեանի կեանքին:

Մինչև 1860 թ. մենք նրան տեսնում ենք Պետերրուրդում, օրտեղ՝ մի տարի պարապելուց յետոյ, արևելեան լեզուների կանդիգատի քննութիւն է տալիս: Այնուհետե մեկնում է իր հայրենի քաղաքը: Այստեղ նա պատգամաւոր է ընտրում՝ ճնդկաստան ուղևորւելու և Նոր-Նախիջևան քաղաքին կտակւոծ գումարի գործը գլուխ բերելու համար: Մօտ 2 տարու չափ մնում է Ասիալում և Եւրոպայում՝ մի կողմից իր առաքելութիւնը ի կատար ածելու, միւս կողմից այլ դիտաւորութիւններ ու նպատակներ ունենալով: Վերջինս աւելի հետաքրքիր է մեզ համար:

Եւրոպայի հասարակական երկնակամարը 60-ական թւականների սկզբներն պարզւել էր սկսում. յեղափախական ու սոցիալիստական յալտանի ոյժերը խմբւել էին գլխաւորապէս Լօնդոնում. նոքա այնտեղ կաղմում էին լայն ու համարձակ ժաղարյներ: «Զորրորդ դասի» կազմակերպութեան աշխատանքն էր առաջ տարւում. նրա ներկայացուցիչները իրար հետ ինքորմացիայի մէջ էին գտնւում: Հոչտակաւոր ինտերնացիոնալի նախապատաստական շրջանն էր:

Այս ամենը տեղի է ունենում նալրանդեանի աչքերի առաջ դէպի այն նա դիտակից ու համակիր վերաբերմունք է ցոյց տալիս:

Իր միստիան զլուխ բերելուց յետոյ նալրանդեանը աշխատում է մօտիկ ժամութանալ եւրոպական շարժութերին ու

մասաւոր հոսանքներին: Երեխ հէնց ալդ նպատակով էլ ալցելում է նա մի շարք յայտնի կենտրոններ. քանիցս գնումդալիս է Պարիզ ու Լօնդոն, որտեղ բաւականին ժամանակ ապրում է նա: Ապա ժամութանում ու սերտ կապեր է հաստատում մի խումբ հասարակական և քաղաքական գործիչների հետ, ինչպէս՝ Բակունինի, Տերցենի, Օգարեխ, Զերնըշևսկու, Տուրգենևի և այլոց: Նրանցից մի քանիսը նրան քաջ գիտէին և հետն էլ նամակագրութիւն են ունեցել:

Շարժումը, առաջաւոր միտեր խոր հետքեր են թողնում նալրանդեանի վրայ: Այդ միջոցին է, որ նա զրում ու հրատարակում է Լօնդոնում իր ամենալաւ երկը՝ «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ»: Գործնական ասպարիզումն էլ նալրանդեանը ունեցել է որոշ ծրագրներ, որոնցից է առանկահայերի մէջ յեղափախական շարժում առաջ բերելու միտքը<sup>\*)</sup>:

Շորհիւ իր ալդ գաղափարների ու ձգտութերի՝ նալրանդեանը շուտով վատնգեց: 1862 թ. կէսերին նա վերադառնում է Ռուսաստան: Դեռ մի քանի օրւան եկած է Եղեկ, երբ Նոր-Նախիջևանում ձերբակալւելով, տարւում ու նետում է Պետրոպալովսկի բերդը: Այստեղ Յ տարու չափ մնալուց յետո՝ թոքախտաւոր ու մաշւած, աքոր է ուղարկուում երկի մի խուլ անկիւնը:

Աքսորավայրում, 1866 թ. մարտի 31-ին, նալրանդեան մեռնում է կտրն, աղմկայուղ և տանշալից կետնքից յետոյ, որի մասին նա իր բանտային նամակներից մինում գեռ առել է՝ «Я давно уже привык к страданьям; на пути моей жизни никогда не цветли розы».

## VI.

Մեր առաջն է Միքայէլ նալրանդեանի գործունեւթեան երկրորդ շրջանը:

Այստեղ մի շարք գրւածքներում նա երևան է հանում իր հաստրակական—վիթլիովիալեկան աշխարհակացքը:

<sup>\*)</sup> Այդ ինորի շուրջը նա կապեր է ունեցել յայտնի Մաղծինութեան:

Ահա՝ «Երկրագործութիւն»-ը, որին որպէս էպիգրաֆ ժառանքում է լ. Ֆօյերբախի հետևեղ միտքը. «Իմ աշխատութեան դաղափարքը միայն եղբակացութիւնը են, փաստերի հետևանքը. նոքա ըստինքեան գաղափարք չեն, այլ կերպարանաւորւած, կենդանի կամ պատմական իրողութիւն»։ Սրանով է սկսում Նալբանդեան սուր շարժել իդէալիզմի դէմ։ «Վերացուիան» ու «միստիքական» խնդիրներով պարագելու ժամանակը անհետ անցել գնացել է։ Անցան այն ժամանակները երբ ժտածում էին պարզամիտ մարդիկ, թէ օդի անչափելի բրձութեան մէջ դրւած է փիլիսոփայութեան աթոռը։

Սու՛տ. փիլիսոփայութիւնը երկրազնդի վրայ է, մարդն է նրա աջառք, մարդն է նրա և քննողը, և քննելին։ Բայց մարդը յառաջ քան թէ պիաի դույանայ... ապրի... քննէ և իմաստասիրէ իր անձը, իր կեանքը, իր անցեալը, իր ներկան... այս բոլորից առաջ մարդ կարօտ է նիւթի։ Անցան այն ժամանակները, երբ մշուշով պատած մարդկալին երեակայութիւնը ոչնչից տիեզերք էր ստեղծում «(ընդգծումը մերն է.- Ա. Մ.)»։ Պա՛րդ է և կտրուկ։ Մատերիալիստական տեսակէտն է այստեղ արժարմում։ Դա Ֆօյերբախիզմի ազգեցութեան հետևանք է, և Նալբանդեան յետ չէր մնացել իր ժամանակից։

60-ական թւականները Ֆօյերբախի վարդապետութեան լաղթանակի դարն են կազմում։ Հեգելի իդէալիստական շկոլան այլևս անբաւարար է համարւում. և ձախակողմեան հեգելեանները ուրախութեամբ փարւում են Ֆօյերբախի աւելի արմատական վարդապետութեան, որի հանած Փուրօքը մէժ էր. ինչու՞մն է կայանում Ֆօյերբախի փիլիսոփայութեան էութիւնը։ Նոյն՝ հեգելի մասին։

Հեգելի փիլիսոփայութեան ժումը կազմում է դիալիքական մեթօդը։ Հեգել դիալիքտիքան հակադրում է մետաֆիլիքին։ Նա դանում է, որ մետաֆիլիքան իրերի զարդացման պրօցեսս ասածդ ինկատի չի առնում, որովհետեւստ մետաֆիլիքալի իրերը և երեսութեանները ներկայանում են որպէս քարացած, իրարից անկախ մեծութիւններ։ Դիալեկ-

քան, ընդհակառակը, երեսովները տեսնում է իրարից կախում աւնեցած, մի շարքում, նա այն քննում է որոշ տուազընթացութեան ահսակէտից։ Երեսովները—դա մի ամբողջ պրօցեսս է, որ շարունակ շարժում է։ Իւրաքանչիւր բան զարգանում է. իր այդ ընթացքում նա փոփոխում է անդնդիատ ու տարութերում է։ Ամեն ինչ յարաբերական է. բարատես. ու բացարձակ ոչինչ չկայ, այն, որ այսօք կայ, վաղը այլ է, այն, ինչ այս է, նա միւնոյն ժողովական է այն է։ Իրերը իրանց զարգացման պրօցեսը արտայալտում են նրանով, որ հոսում են հակասական ձեռվ, հակասութիւնների միջոցով. իւրաքանչիւր դրութիւն առաջադնալով վաղ թէ ուշ աեղի է տալիս մի այլ դրութեան։

Այստեղից քանակը զարգանալով վերածում է որակի և ընդհակառակը, կերպարանափախութիւնների ալգորինակ ձեր տեղի է աւնենում վերջիկերչոց արմատական լեզուլութերի՝ յեղափախութիւնների միջոցով. չէ՞ որ քանակը որակ զառնալու համար կորցնելու է իր ուրախ լատկութիւնները։

Սա կեանքի անխուսափելի օրէնքն է, կեանքի՝ թէ բնութեան ծոցում և թէ հասարակութիւնների մէջ։

Հեգելի այս թիօրեան Նալբանդեանը ըմբռնել է, թէ ոչ լիովին։ Նա ունի մի յօդւած, նւիրւած հեգելի մեթօդի լուսաբանութեան՝ «Հեգելը և նրա ժամանակը», որ ի գէպ ասած՝ առաջն և առաջմ վերջին անդամ լոյս է ընծայված որանից 10—11 տարի առաջ «Լումայ» հանդիսում։ Այստեղ նա ասում է. «Ոչ հեգելի աշակերտ ենք և ոչ Շելլինդի, Բայց որդարութիւնը սահպում է խոստովանել, որ երկուսի համակարգութիւններն էլ մեծ օգուտ ցոյց տւին զիտութեան ընդհանուր ձեւերը լաւագործելով, որոնց միջնորդութիւնը առաջ է գնում զարգացման գործողութիւնը» (ընդգծումը մերն է. Ա. Մ.):

Սա միանգամայն ճիշտ է, որից Նալբանդեանը աշխատում է եղբակացութիւն անել։ «Այս յայտնագործութեանց հիմնական արդիւնքը՝ շարունակում է նա, երեսում է հետեւալ առածի մէջ՝ զարգացման վերին աստիճանը իր ձեռվ նման

է սկզբին, որտեղից առաջ է գնում այդ զարգացումը»։ Այնուհետև Նալբանդեանը անցնում է Հեղեղի մեթօզի պարզաբանութեան՝ բաւականին մութ ու խրթին, թերևս և տարակուսելի կերպով։ «Հեղեղը դրականապէս ասում է, թէ «միշին արամաբանտիան մօմենտները, աւելի քան թէ ուրիշները, չն հասնում առարկայական էութեան, մասով միայն որպէս տրամադրանական մօմենտ։ Հերիք է եթէ որոշեալ միշին մօմենտը հասել է էութեան որևիցէ կամ երբեկցէ։ սրանով, ուրիշ տեղերում և ուրիշ ժամանակներում զարգացման դարձողութիւնը ազատում է այդ մօմենտները առարկայական էութեան հասնելուց»։ «Որ զփորձ առեալ է, կարող է փորձարաց օգնական լինել», — այս փարզապետութեան սկզբունքն էլ նոյն կէտիցն է իշնում։ Արդարե եթէ միշին մօմենտները իւրաքանչիւր դիպւածում անշուշտ հասնելու լինեին առարկայական էութեան, զարգացումը ոչ միայն դանդաղ, այլ և անհնարին էր։ Ստոյդ է բնութեան մէջ սատիւնը չը կան, այլ հետեւական շղթալաշատութիւն (?—Ա. Մ.), բայց եթէ մի դիպւածում չէ իրագործում միշին մօմենտը, այդ շղթան չէ կատարուում։ որովհիտ մի անգամ հասել է այն մօմենտը առարկայական էութեան և հերիք է»։

Ցիտատը երկար է, բայց նա շատ հետաքրքրական է։ 60-ական թւականների մի զրող է, այն էլ հայ, այս գատողութիւնները անողը։ ուշադրաւ ու խրատական երեսլիթ։ Կա՞մ մի այլ հայ կլասիկ զրող, որ իմացած կամ թէկուզ լսած լինէր մի քիչ առաջ բերւածի նման մտքեր։

Հեղեղի միթօդի բացայտումը մէնք գտնում ենք Նալբանդեանի ամենաընտիր ու հասուն աշխատութիւններում, ինչպիսիներից է «Երկրագործութիւնը որպէս սւզիդ ճանապարհ»։ Անտեղ Գեղինակը հարցնում է՝ «Ի՞նչ է կեանը», և անմիշապէս պատասխանում է՝ «կեանը տնդադար շարժութիւն, նիւթերի անդադար փոխանակութիւն և անձնապահութիւն»։

Կարդանը և այս մտքերը։ «Փորձունէութիւնը շարժողութեան հետեւանը է և առանց շարժողութեան չկայ դոր-

ժունկութիւն։ Ուր չկայ դորժունէութիւն, ասել է չկայ շարժողութիւն, իսկ ուր շարժողութիւն չկայ, այնտեղ կեանք չկայ», համարձակ պնդում է Նալբանդեանը։ «Ամեն բան կախում է չափից։ չափը միակն է, որ չափում է տարածութիւնը։ Տարածութիւնը բատ ինքեան ոչ մեծ է և ոչ փոքր, մինչև որ մի ուսիշ նրանից մեծ կամ նրանից փոքր բանի հետ չը բաղդատուիք»։

Ի՞նչ է նշանակում այս։ Նալբանդեանը մատնանշում է իրերի հոսող, զարգացող ու տարութերուղ յատկութեան վրայ. երեսլիթների մէջ նկատում նա յարաբերականութիւն և համեմատականութիւն։

Դիալեկտիքական մեթօդը Նալբանդեան կիրառում է կօնկրէտ օրինակներով, պատմական երեսլիթների կետնքում։

«Երկրագործութեան» հէնց առաջըն տողերից իմանում ենք, որ չիւսիսալին Ամերիկայի կափւը չարաւայինի դէմ սորկութիւնը ախտեղից վերացնելու նպատակով, ցանկալի չէր Անգլիային. այդ «ազատամիտ» երկիրը պատրաստ էր, իր կողմից պատերազմ յայտարարելու հիւսիսային Ամերիկային. նա չէր ուզում, որպէսզի սարկութիւնը վերանար մէջտեղից։

Այս հակասութիւնը բատ Նալբանդեանի նրանով պէտք է բացատել, որ Ամերիկական պատերազմը և սարկութեան վերացումը բամբակի արդիւնակործութեան մեծ վնասներ էին հացնելու. իսկ Անգլիայի ինդուստրիական կեանքը առանց բամբակի մեռած է։ Աս է իրերի գաղտնիքը։ Նալբանդեանի համար, ուրեմն, չկայ անպայմոն երջանիկ ու ազատ երկիր. ամենաերշաբիկ համարւած վայրը կրում է իր մէջ բացասական ռազմեր. ամենաաղատ երկրներից ազատազօյնն անգամ զուրկ չէ բոնակալական ձգտումներից։ Նա կործում է, որ իր ժամանակակից կարգերը իրանց զրական յատկութիւնների հետ ունին և բացասական կողմեր, որ այդ երկու մեծութիւնները վաղ թէ ուշ ընդհարւելու են, և դրանից առաջ է գալու ռասուկալի փոթորիկ»։ Երեսլիթներին դիալեկտիքական պրիզմալից նալող Նալբանդեանը հասկանում է, որ էվոլյուցիան առանում է դէպի բէփոլիցիա։

Սբանումն է կայանում Նալբագեանի հեգելիանիզմը:  
Ըստ հեգելի սղբալեկտիքան գաղափարի ինքնազարդա-  
ցումն է: Մաքի մօմենտը գերիշխող է և նախապատճառ  
ամեն ինչի: «Բացարձակ գաղափար», — սա զարդարաց,  
զիալեքտիքորէն ապրոզ, ինընազոյ և ինընասկիզբ մի մեծու-  
թիւն է: «Բացարձակ գաղափարը» մի կծիկ է, որ անվերջ  
քակւում է:

Դիալեկտիքան պրօցեսը «բացարձակ գաղափարի»  
արտացոլումն է, եւ այսաւել է թաղւած հեգելի իդէալիզմը,  
որ նրա փիլիսոփայութեան յատկանիշ կողմն է կազմում:

Դիալեկտիքա և «բացարձակ գաղափար»: Սա մի խոշոր  
հակասութիւն է հեգելի փիլիսոփալական սիստեմում: Հեգելը  
դուել էր բանալին, բայց այն գործադրել չկարողացաւ: Նրա  
փիլիսոփալական մեթոդը արմատական է, սակայն սիստեմը՝  
խախուտու եւ նա ունենալու էր իր յաջորդները, որոնք շտկե-  
լու էին նրտ սխալը,

Ահա Լ. Ֆօնքրախը, որ դուրս է եկել հեգելի շկոլայից:  
Նա, մի կողմ նետելով իր նախորդի «բացարձակ գաղա-  
փարը», գալիս է այն եզրակացութեան, որ իրերի և երե-  
սլիթների նախապատճառ պէտք է համարել նիւթական աշ-  
խարհ՝ բնութիւնը: Փիլիսոփալական ժանրակչիու պրօրեմը՝  
մտքի և իրականութեան յարաբերութեան խնդիրը Ֆօնքրախ  
լումում է յօդուտ երկրորդի: Ողին կախւած է նիւթից, թէ  
նիւթն է պայմանաւորում «դին: Այդ հարցով իդէալիզմի և  
մատերիալիզմի բախտն է վճռում: Եւ Ֆօնքրախը մատերիա-  
լին է գերաշուռութիւն տալիս: Ֆօնքրախ իր «Քրիստոնէու-  
թեան էութիւնը» գրւածքով, ասում է Ֆ. Էնդելս, յարտա-  
րարեց մատերիալիզմի յաղթանակը: Բնութիւնը գոյութիւն  
ունի անկախ որեւէ փիլիսոփալութիւնից: Նա այն հիմքն է,  
որից բղխում ենք մննք. մարդիկ նրա ստեղծւածքներն են:

Բնութիւնից և մարդուց դուրս չկ' ոչինչ: Այսպէս  
է Ֆօնքրախի մատերիալիստական փիլիսոփալութիւնը:

Նալբանդեան գարակւել է նրանից: «Փիլիսոփայութիւնը  
երկրագնդի վրա է, մարդն է նրա աթոռը, մարդն է նրա և՝

քննողը, և քննելին: Բայց մարդը առաջ քան թէ պիտի  
գոյանալ... ապրի... քննէ և իմաստաօիրէ..., կարօտ է նիւ-  
թիւ, այս տողերն է գրում Ֆօնքրախից ազդւած Նալբանդ-  
եանը:

Մենք հեռու ենք, անշուշտ, ասելուց, թէ Նալբանդեա-  
նի մատերիալիզմը կամ զիալեկտիքան եղել են անշեղ ու  
հարազատ, նմանապէս և նրա՝ հեգելի ու Ֆօնքրախի ըմբռ-  
նումը. այստեղ ունի նա թերութիւններ ու օխալներ. բայց  
հարցը դրանում չէ: Կարեորը այն է, որ 60-ական թւական-  
ների մի հայ հրապարակախօս կարողացել է վարակւել դիա-  
լեկտիքայով ու մատերիալիզմով: Աւելին. այդ վարակումը  
նրան տարել է հեռուն: Մենք գիտենք արդէն, որ ռմարդը  
ծնանելով չունի իր մէջ առաքինութեան կամ վաաթարու-  
թեան սկզբն կամ տարը, և հոգու այդ ունակութիւնը  
հետևանք են նրա լաւ կամ վատ շրջակարի ազդեցութեանը: նոյնն էին ասում և XVIII դ. Փրանսիական մատերիալիստ-  
ները: Միմիայն ալդքան: Սակայն նալբանդեան գնում է առաջ:

Մարդկային արարածը կախում ունի հասարակական  
շրջավարից, գեղեցիկ. այնուհետև, վերջնիս հետ նա կապ-  
ւած է իր հետական և իրական պէտքերով: Արանք կազմում  
են մարդկային կամ հասարակական կեանքի բովանդակու-  
թիւնը, պայմանները. իսկ բարձրացնելու մէջ տեսնում ենք  
տնտեսական խնդիրը, եղրակացնում է նալբանդեանը:

Այս միտքը նա արտայալում է շատ անդամ և տար-  
բեր եղանակներով: «Ճնտեսական խնդիր» ասելով նա հաս-  
կանում է հողային հարցը: որին առաջնակարգ նշանակու-  
թիւն է տալիս. առանց նրա լուծւելուն չեն լուծվի հասարա-  
կական, քաղաքական և այլ պրօլետեանը:

Ֆօնքրախ կանդնեց կէս—ճանապարհին: Նրա մատերիա-  
լիզմը տարւած է իդէալիստական հովերով. ապացույց՝ նրա  
կրօնն ու մօրալը: Բայց ալդ, Ֆօնքրախի մօտ հասարակա-  
կան երևութների մատերիալիստական բացառ-  
ութիւնը բացակայում է: Եւ ահա XIX դ. կիսին  
կարլ Մարքսը, որ անցել է հեգելի ու Ֆօնքրախի շկոլաները,

դիալեքտախըան ու մատերիալիզմը զնում է հաստատ հիմքերի վրայ: Մարքսի դիալեքտախական մատերիալիզմը պնուհետեւ գառնում է երեսյթների նշգրիտ բանալին: Այդ աթիւ Ֆ. Էնգելս ասում է. «վերապառնալով մատերիալիստական աեսակէտին՝ մենք նորից տեսանք, որ մարդկային գաղափարները խսկան իրերի լուսանկարն են ներկայացնում, փոխանակ ընդունելու խսկան իրերը որպէս լուսանկար բացարձակ գողափարի, որ դժուում է զարդացման որոշ առանձնանի վրայ»:

Նալբանդեան սրանով էլ է որոշ չափով զեկավարւել: Նա գտնում է որ մարդիկ կախում ունեն հասարակական շրջափակից, որի հետ նրանք կապւած են իրենց «կական և իրական պէտքերով» վերջիններս հասարակական կեանքի բավանդակութիւնը կամ պայմաններն են կազմում, իսկ «պայմանների մէջ աեսնում ենք տնտեսական խնդիրը»:

Սա արգէն սօցիօգիք է:

Ինչով է պայմանաւորւում հասարակական կեանքը: Դիալեքտիստական մատերիալիզմը պատասխանում է դրան: Հաստրակական կեանքը խարսխւած է նրա տնտեսական պրութեան վրայ, իսկ վերջինը որոշւում է արտադրող ոլորտի զարդացմամբ: Այս մօմենտն է, որ բացատրում է պատմութեան ընթացքը և առաջխաղացութիւնը, նրա ձգառները, պատմական կեանքի իւրաքանչիւր տւեալ էտապը:

Այս խնդրում, ինչպէս տեսանք, նալբանդեանը բաւականին մօմենում է դիալեկտիստական կամ, ինչպէս շատ անգամ ասում են, պատմական մատերիալիզմի հիմունքներին. չէ որ նա ծանօթ է հեղեղին ու մօյերբախին, չէ՝ որ նեթակալ է եղել Բելինսկու և Զերնշեսկու ազդեցութեան. իսկ ուս վերջինները ժամանակակից դիալեկտիստական ու մատերիալիզմին մօտ են կանգնած եղել. մանաւանդ Զերնշեսկու Վերջապէս, Նոլեանդեանին պատմութեան բացատրութեան բանալին տւել է Բակունին, որ իր հերթին ազդւած է եղել Մարքսից, թէև անյաջող կերպով: Անշուշտ Նալբանդեանն էլ է անյաջող կերպով ազդւել, նրա «դիալեկտ-

բական մատերիալիզմը» ընդհանուր և անորոշ, իսկ ու հակառական կերպարանք է կրում. ստիայն նրա արժանիքը մեղ հետաքրքրող հարցում մեծ է, եթէ ինկատի ունենանք նրա ապրած էպօխան: Այդ արժանիքը նախորոշում է արգէն նրա հասարակական գաւանանքներն ու սիմպատիաները: Դառնանքնը նրանց ըննութեանն

Նալբանդեանի հասարակական հայեացների ելակէտն է կտղմում տնտեսական թէօրիան, որ նա այսպէս է ձեակերպում: «հասարակ ժողովրդի համար ուղղակի, և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպէս անհրաժեշտ, ինչպէս շուրը ձուկի համար, միակ աղբիւր տպրուստի և հարսաւթեան է երկրպարծութիւնը: Եթէ որ մի աղդ կազմող տնհատների մեծագոյն մասը պարապի երկրպարծութեամբ և առհասարակ գիւղական տնտեսութեամբ, այն ժամանակ, այդ ազգի ընդհանրութիւնը հարուստ է և ապահովեալ որովհետեւ նրա հիմքը դրւած է բնականապէս և ընութեան վերայ»: Առաջին նւորդ թւում է, թէ նալբանդեան կանդնում է ֆիզիօկրատների տեսակէտի վրայ, իսկ պ. Լ. Մանւելեան իր «ճարոց գրականութեան» Բ. պրակտում կարծում է, որ նա այսուեղ Ա. Սմիտի շկոլայի հետեւող է հանդիսանում. բայց ըստ երեսյթին Պ. Մանւելեան թուլ է տւել իրուն տնել մի գուհիկ սխալ՝ ֆիզիօկրատիզմը շփոթելով Սմիտեան ուղղութեան հետ: Սակայն մենք դառնանք այն հարցին, թէ կարելի՞ է արգեօք նալբանդեանին ֆիզիօկրատ համարել:

XVIII գ. Երկրորդ կեսին կապիտալիզմը նոր նոր էր ձլում եւբոպալում: Նախկին պրօտեկցիօն միջոցներն ու ձգտութեանը մեծապէս խանգարում էին նորարոյս բուրժուալիստի տռաջընթաց շարժման, նրան անհրաժեշտ էր ազատ տնտեսական կեանք և զարգացում: իսկ այն կարելի էր ձեռք բերել լարտբերութիւններն ու կարգերն լայտարարելով միանդաման ազատ և վերջին հաշուով նետւելով «ազատ» ընութեան գիրկը: Բնութիւնը ազատ է, նա և մարդուն այդպէս է ստեղծում: Մարդկային լարտբերութիւնները պէտք է որ

աղաւ լինեն: Դա յալոնի ordre naturel կոչւածն է: Այստեղից է իր սկիզբը առնում ֆիզիօկրաաների գործը: Նա բուրժուազիա լին շօշափելի օգուաներ էր խոստանում այն չտփով ինչ չափով որ կապիտալիստական յարաերաւթիւնը հանելով պետութեան ու աւատականութեան հովանաւորութեան տակից, ենթարկում էր այն միայն ու միայն նրա կամքին: Ordre naturel-ը տանում է և դէպի բնական տնտեսութիւն: Բնութիւնը—իմա' հողը—ժողովրդական տնտեսութեան հիմքն է կազմում, որովհետև նա է այն աղբիւրը որտեղից դուրս է դալու զուտ եկամուտը—produit net. այլ խօսքով՝ յաւելեալ արժեքը—կապիտալիստական տնտեսութեան անհրաժեշտ ու կտրեար այդ մեծութիւնը—արդիւնք է դեղուատնետեսական աշխատանքի: Ահա' թէ ինչի է յանդում ֆիզիօկրաաների տեսակէտը: Եւ նրանք ոշխտում էին բարելաւել գիւղատնետեսութեան դրութիւնը. նրանք հարցի մի կողմին էին միայն նայում. առհասարակ քաղաքային արդիւնաբերութեանը հոգու նրանց չէր էլ դրադեյնում. նա, համեմատած հողագործութեան հետ, երկրորդ կարգի մեծութիւն էր: Սակայն Ա. Միհա եկաւ ցոյց տալու, որ կապիտալիստական տնտեսութիւն ասածդ իր ամբողջութեամբ պէտք է ինկատի առնելի: Զիտ' սոսի գիւղատնետեսական արդիւնաւէտ ոշխատանք. իւրաքանչիւր ոշխատանք արդիւնաւէտ է, ալսինք' յաւելեալ արժեք արագիրող, լինի այն բնութեան ծոցում, թէ գործարանների խաւար կամարների տակ: Եթէ ֆիզիօկրատիզմը նորածիլ բուրժուազիայի թիօրիան է, ապա սա արդէն կազմակրուած բուրժուազիայի աեսակէտն է: Սակայն թողնենք այս:

Իսկ ի՞չ է ասում նալբանդեան:

Եարունակենք նրա մտքերը մեր բառերով արտայալաել: Ժողովրդի հարստութեան հիմքը երկադորժութիւնն է (հաղ և աշխատանք). վերջնիս այս կամ այն վիճակը անմիշապէս աղջում է ինչպէս վաճառականութեան ու արհեստների, նոյնպէս և ողջ տնտեսութեան վրայ. հողը, երկրագործութիւնը այնպիսի մի մեծութիւն է, որ կեանքի ու նրա

բոլոր արտայայտումների վրայ անմիշապէս դնում է իր կրնիքը:

Այդ տեսակէաք բղխում է այն ժամանակւայ իրերի ինքնատեսակ դրութիւնից: XIX դարի կեսերին և առաջ եւրոպայում կազմիտալիզմի լաղթանակը աւելի քան ակնյալու էր:

Միջնադարեան տնտեսութիւնը նրա հարւածների տակ բեկրեկել էր. մանր տնտեսակարգը քայլապւում էր. մանր արդիւնաբերողը դեգերում էր կեանքի դժնդակ պայմաններում:

Գիւղը տնտեսական կացութեան զգայուն ժանրաչափն է. դժբախտ հանգամանքները նրա վրայ թողնում են խոր հետքեր ու ծանր տղղեցութիւն: Այդ գատճառով էլ գիւղատնետեսութիւնը մեծ ուշադրութիւն է դրաւում. շտաբը կարծում են, որ՝ եթէ նրա վիճակը բարւոքւի, երջանկութիւնն ու խաղաղութիւնը նրա գլխից անպական կլինեն: Եւ երկրագոծութիւնը ողջ անտեսութեան անկիւնաքարն է սկսում կազմել: Այդպէս է նա թէ ֆիզիօկրատների և թէ՛ մանր տնտեսութեան պաշտպանների համար, որով այդ երկու կատեգորիաների մէջ Փօրմալ նմանութիւն է առաջ գալիս: Գիւղական տնտեսութեան բարւոքման համար ծրագիրներ են ձշակւում. մանր բուրժուազիայի իդէօլոգները աշխատում են վերագարձնել նրան նախկին փառքը: Միսմօնդին, օրինակ, կողմնակից էր խոշոր տնտեսութիւնների բաժանման մանր արդիւնաբերողների և առհասարակ աշխատաւորների մէջ: Նմանօրինակ մտքեր, սոկայն այլ ձեռվ արտայայտած, մենք պատահում ենք և ուրիշ շատ զրոգնեների մօտ:

Նոյն էր և նալբանդեանն, որի գաղափարները արդիւնք են որոշ իրականութեան, որը կանգնած է եղել որոշ խաւի տեսակէտի վրայ:

Եւրոպական իրականութիւնը և եւրոպական միտքը մեր հրապարակախօսի վրայ ունեցել են իրանց ազգեցութիւնը. նրա հասարակական դէմքը պարզւել է ուստական կեանքի և ուստածագների շնորհիւ. իսկ հայ իրականութիւնը ուղ-

Դութիւն է տւել նրան, նախորոշել է նրա իդէօլօգիան Նալ-  
բանդեանը ամենից առաջ և ամենից շուտ հայ կեանքի ծր-  
նունդ է:

XIX դ. կեսերին հայկական իրականութեան ծոցումն էլ նկատելի էր մասսաների քայլայման պրօցէսը անտեսավէս. այնտեղ փողը մուտք էր դործել արդէն: Պանդխութիւն ասածդդ զիւղական աղդաբնակութեան համար նորութիւն չէր: Նալբանդեանը նրա մասին խօսում է և բաւականին ընդարձակ կերպով: Ուուսական անտեսահասարակտիւն կեանքն էլ աղդեցութեան տակ հայ տնտեսահասարակական կեանքն էլ առաջ էր գնում արագ կերպով: Միջնադարը տեղ էր տալիս նոր հպօխալին: Հասկանալի է, որ այդ հանդամանքի շնորհիւ իդէօլոգիան ունենալու էր իր ուրոյն գոյնը. նա կը ելու էր և կրում էր իր վրայ «մանր ժողովրդի» մանր արդիւնաբերողի կնիքը. և ապա չէ՞ որ հայ միտքը հետեւ է միշտ երուպտիկան ու մանաւանդ առևսական մտքին: Այդ իսկ պատճառով նա զերծ չմնաց ուտքափառական տարրերից և ուտպիան հանդէս եկաւ գիւղատնտեսական կեանքի շրջանակներում: Նալբանդեանը նրա ներկայացուցիչը դարձաւ:

Այժմ պարզ է, թէ ինչ կապ կարող է լինել Փիզիօկրա-  
տիզմի և Նալբանդեանի տնտեսական թէօրիալի միջն: Մի տեղ երկրագործութիւն՝ լանուն կապիտալիզմի զարդացման, միւսի մօտ մանր գիւղատնտեսութիւն՝ լանուն մանր տնտեսութեան. Փիզիօկրատները խոշոր բուրժուազիալի ներկայացուցիչներ են, իսկ Նալբանդեանը արձագանքում է մանր բուրժուական իդէօլոգիալին: Եւ ալլապէս չէր էլ կարող լինել քանի որ Նալբանդեանին Փիզիօկրատիզմից բաժանում է մի ամբողջ դար:

Այդպիսով Նալբանդեան մեկնում է մանր-բուրժուական իդէօլոգիալից. նա կանգնած է ժամանակի ամենագեծոկրա-  
տիկ խուժի - մեր կեանքում իհարկէ - շահերի տեսակէտի վրայ: Այդ խաւը հասարակ ժողովուրդնայ է: նա վառ կերպով ասում է. «Մենք աղտատակամ նուիրեցինք մեզ հասարակ ժողովուր-  
դի իրաւունքը պաշտպանելու: Մեր անձը և զրիչը չնուի-

բեցինք Գարուսաներին, նրանք իւրեանց արծաթի թումբե-  
ւի առաջ անխռոցելի ենց: Այնուհետև նա ցուց է տալիս, որ  
պիտօքարակ ժողովրդի» գրութիւնը Անդլիալում և Ֆրանսիա-  
ցում շատ անախանձելի է. նա շարունակում է «մեր աչքի  
առջև են բիւրաւոր անգործ գործաւորք, որ տանջւում են  
սրվից և վերջին նիգն են թափում, պատերազմելով մի ժայ-  
րացեալ աղքատութեան հետոյ: Նոյն է և հայերի մօտ. այս-  
տեղ պանդխութիւնն է իր գործը աեսնում: Հրապարակա-  
խօսը ցաւելով ցաւում է տեսներով մանր արդիւնաբերովի ան-  
կեալ վիճակը. այնուհետև նա ի՞նչ է անելու. ուրիշների մօտ  
աշխատելը այնքան էլ հեշտ բան չէ չէ որ անա ևս մարդ  
է, զգաղմունք ունին, բացականչում է քաղենական միամտու-  
թեամբ մեր հեղինակի:

Այդօրինակ անհաւասար կացութիւնը մի օր այսպէս թէ  
թէ այնպէս վերանալու է. «Եւրոպան կանգնած է այսօր մի  
զժուար լուծանելի խնդրի առջև, այդ տնտեսական խնդիրն  
է. մարզը և հացը: Եւ այդ խնդիրը, կանուխ թէ ուշ, թէ և  
սոսկալի փոթորիկներով, պիտի լուծեի: Ոչինչ ըռնու-  
թիւն, ոչինչ պահպանողական համակարգութիւն, ոչինչ ընդ-  
դիմադրութիւն, որևէ կողմից, չէ պիտոյ կարողանալ փակել  
նրա առաջքը, թէ և այսօր, հալածական և աքսորական են  
այդ ապագալի մարդարերը և առաքեալքը» (ընդգծումը մերն  
է. — Ա. Մ.): Սա խոր համոզմանքից բղխած մի նշանակալից  
միար է: Նալբանդեանը գիտէ, որ կայ տնտեսական անհաւա-  
սարութիւն, ուստի և գասակարգալին բաժանութեան. գասա-  
կարգալին բաժանումը առաջ է բերում կախ, որ պիտի լուծեի  
ոփօթորիկներով», որի շնորհիւ արոլը երկրագնդի վրայ  
խստովանելու է հաւասար իրաւունքը»:

Բայց ինչպէս է իրան ներկայացնում Նալբանդեանը  
մարդկալին ազգի հաւասարութիւնը, տնտեսական գրութեան  
նարմակ վիճակը: Նա քարոզում է հողաչին համայնաց ում: Հօղը չի կարող սեփականութեան առարկայ լինել. նա պատ-  
կանում է ամբողջ ժողովրդին: Հօղի մասնաւոր սեփականու-  
թիւնը պէտք է վերացնել. նրա տեղը պիտի բանէ հասարա-

կահան սեփականութիւնը: Խւրաքանչիւր մարդու թոյլ է զրւում օգտուել հօգից «Կաւասար չափով»: Իսկ որպէսզի նախին «անհաւասարութիւնը» նորից չիրկնւի՝ «հողը վաճառելու ոկզրունքը» արգելւելու է: Այն ժամանակ հասարակութիւնը, նրա «անդամը և նրա սերունդը հաստատում է իր հեանքը մի ամսուր և ապահով հիմքի վրայ. և անհնար է, որ նա կամ աղջատութեան հանդիպի, կամ իսպառ կարօտ մնալ»: Իոկ քաղաքալին տնտեսութիւնը: Երբ որ հիմքը բարւոքւի, կրարւոքւի և շէնքը, ոչ շէնքը: Քաղաքալին տնտեսութիւնը առանձին փոփոխութիւնների կարօտ չէ: Երկրագործութեան բարեկարգումը կզապի և վաճառականութեան կամ արհեստների քայլայիչ ձետութերը:

Ահա ձեզ ազգարալին սօցիալիզմ, որի ելակէտն է սեփականութեան ինստիտուտը: Խախուստ ելակէտ. որովհետեւ նա երևոյթի բուն հիմքը չի պրատում՝ արտազրութեան ձեք—որ է անհատական մուս է նոյնը: Այն ինչ սեփականութիւն ասածդ որոշում է արտադրութեան մօմենտով. չի կարելի այն աչքաթող անել, որովհետեւ վազ թէ ուշ սեփականութեան ձեք նա խարմարեցնելու է իրան: Իւֆորմի թոյլ կողմք այլ և նրանութն է կայանում, որ ժողովրդական անտեսութեան միւս ընդարձակ մասը, քաղաքալին արդիւնաբերութիւնը ի նկատի չի առնաւած: Տնտեսութեան պես-պէս ծիւղերը կապւած են իրար հետ սերտ կտակերով, մէկը միւսից անկարելի է անշատել. մէկի կրած փոփոխութիւնները զարկ են տալիս և միւսին, ինչո՞ւ որովհետեւ արտադրող ոչ ժերի զարդացումը ներդորմում է ընդհանուր տնտեսութեան վրայ: Բարենորոգութիւն լինի թէ՛ յեղաշրջում, այն պէտք է տեղի ունենալ ոչչ անտեսակարգի վերաբերմամբ:

Այդ իսկ տեսակէտից Նալբանդեանի ազգարային սոցիալիզմը ոչ—իրական է: Եւ ոչ միայն այդ կողմից: Տնտեսական կեանքի վերջին ֆազի զարգացումը ընթացել և ընթանում է կապիտալիզմի բովով: Եթէ իրանց դարը անցկացրած տնտեսական ձեւերը քայլայւում են, ապա ոչ մի ժուացածին միջոց

չի կարող կատեցնել իրերի ընթացքը: այդ ուղղութեամբ արւած փորձերը հանդիպում են անյաջողութեան. նրանք ցնորք են. իսկ նրանց հեղինակները ուտոպիստներ: Այդպիս են եղել անցեալ զարի զանազան տիպի ուտոպիստ-սօցիալիստներն ու ուտոպիստ-բեֆօրմիստները: Նալբանդեան դրանց մէջ բացառութիւն չի կազմել նրա աչքից, ալդպիսով, վրիպել է իսկական «ուղղիզ նանապարհը»:

Ալպէս ուրեմն՝ Միքայէլ Նալբանդեանը ուտոպիստ է և եթէ կարելի է այսպէս ասել, դրական ուտոպիստ, որովհետեւ նրա ժամանակ ու պայմաններում միմիայն ուտոպիստի միջոցով հնարաւոր էր հաստրակտկան իդեալ ծրագրել. բացի այդ նա մեկնում էր գիտութիւնից: Եւ ուտոպիստ Նալբանդեանի արժանիքը նրանում է, որ նա՝ ըմբռնելով իրերի ընթացքը, նախազուշակեց և նախորոշեց նրանց ապագայ զարգացումը. եթէ այդ զիազնողը սխալ դուրս եկաւ, կրկնում ենք, մնաքը օբէկտիվ պայմաններինն է:

Ինչպէս տեսանք, Նալբանդեանը մեկնեց գիտութիւնից, բայց նա յանգեց ուտոպիստին: Ահա ձեզ հակասութիւն: Մի կողմից «չորրորդ գասի» իդեոլոգիան նոր-նոր էր սկսում պլազմա, միւս կողմից «մանք ժողովրդի» տրադիցիաները տակաւին տիրապետում էին. և Նալբանդեանը, արձագանք տալով առաջնին, չկարսղացաւ ու չէր էլ կարող հրաժարւել երկորդից: Գիտութիւն և ուտոպիստ: Դրանք ժամանակի անհաշատ մեծութիւններ են: Նոյն անհաշատութիւնը, հակասութիւնը մէր հրապարակախօսի գաղափարների մէջ մենք կդանենք և ուրիշ ինցիդների նկատմամբ:

Օրինակ, ազգային հարցը: Նալբանդեան նացիօնալիստ է. նացիօնալիզմը նա աեսականօրէն հրմանարում է որպէս դիալեքտիկ-մատերիալիստ: Դա մի հակասութիւն է, որով հարուստ է Նալբանդեանի մտաւոր աշխարհը, ինչպէս և բոլոր մանր-բուրգերական տիպի իդեոլոգների և ուտոպիստների: Ազգութիւնը ըստ Նալբանդեանի, մի պատմական կտտեգորիա է, որ մնում, զարգանում է և մի օր էլ ոնչանալու է: Մարդը, անհատը ազգութիւնից բարձր է: «Մենք ուրանում ենք ազ-

Դի լինելութիւնը. մարդը կար, բայց աղջը չկայ», ասում է նու Բանականութիւնը երբէք չի կարող արդարացնել ազգութեան գոյութիւնը, և մարդը, որ միշտ կարօտ է եղել պաշտօնական եարլիկների, այսօր՝ փոխանակ իր անունով դուրս դարու, ասպարէզ է եկել աղջութեան դրօշի տակ. դա հետեւնք է բռնակալական ձգութենքի ու քալերի: Հասորակական խաւերի կուփ միջոցին աղջութիւնները կռւի անհրաժեշտ էլեմենտներն են կազմում. այդ չափով էլ նրանք պէտք են ու կարեոր: «Այսօր ճնշված մարդերի համար, աղջութիւնն է նոցա միակ դրօշը, որ կարող է բաղւել բռնակալութեան ընդդէմ»: Եւ այս բոլորից յետոյ նա արծործում է սովորական նացիօնալիստական մտքեր, որ նախկինի հակառակն են կազմում:

Դրական հայեացքներով է մօտենում Նալբանդեանը և կրօնին: Իր նամակներից մէկում կրօնի մասին, որպէս հասարակական զրդիչ դործոնի, նա հետեւալ դատողութիւնն է անում. «Իմ կարծիքով, ասում է նա այնտեղ. ոչ թէ կրօնն է քաղաքակրթութեան առաջ մղիչ ոյժը կազմում, այլ աւելի շուտ՝ կրօնի վերածնութիւնն ու կերպարանափոխութիւնը հետեւնք են քաղաքակրթութեան: Բուդդակղմի կամ բրամինկղմի դարեոր տիրապետութիւնը հեռաւոր արևելքում աւելի շուտ ցոյց է տալիս քաղաքակրթութեան և լուսաւուրութեան այն աստիճանը, որի վրայ կանգնած են եղել այդ կրօնները դաւանող ժողովըները»: Սա, անպայման, բէալիստական անստեղիս է: Սակայն Նալբանդեանի նացիօնալիկմը դալիս է նրա այդ մաքին հարուած հասցնելու. նրա մօտ մենք կարդում ենք՝ «Խորատակուած աղջութեան տեղը կրօնն է բռնում»: կրօնը աղջային ինքնառանաչութեան և ինքնուրունութեան խոշոր Փակտօր է, նա «աղջային քաղաքականութիւնը» առաջ առանելու դորժիք է: Այնուհետեւ հաւատացեալի անկեղծ հաւատով նա կրօնական գաղափարին է փարւում: Զնայած վերոիշեալ բէալիստական մտքին, չնայած, որ մի աեղ նալբանդեան պնդում է, թէ «մենք համոզում դիտենք, որ հնագանդութեան պէս կոյր չէ, որ հրամանի պէս չէ բռնա-

բարում քո հասկացողութիւնը, այլ աղջերանում է փաստերը և պատճառները զիտակցութեամբ քննելուց», —իսկ կրօնի էութիւնը համոզումի փոխարէն կոյր հաւատ է բնդունում և զիտակից վերաբերմունքի տեղ հնագանդութիւն է քարոզում, —չնայած այդ ամենին՝ այնուամենայնիւ ցոյց է տարիս նա իր շերմեռանդ կրօնականութիւնը:

Դարձեալ հակասութիւն. սկսելով մատերիալիզմից վերացնում է իդէալիզմով կամ, արտայալուած նրա ոնուի, սմիտիքականութեամբ»: Զարմտնալու ոչինչ չկար:

Քաղաքական խնդիրներում նալբանդեանը մետաֆիզիկ է. գոնէ «Երիբագործութեան» նայելով նա բացասական վերբերմունք ունի դէպի իր ժամանակի բոլոր քաղաքական մեծութիւնները: Բռնակալութիւն և կառավարութիւն նրա աչքում մէկ զին ունեն: Սակայն ի՞նչ է կառավարութիւնը. լըսենք «Երկրագործութեան» հեղինակին: Հարց՝ «Կառավարութիւնը... ո՞վ է այդ կառավարութիւնը, աղջը չէ»\*: Պատասխան՝ «Չէ», կառավարութիւնը կառավարութիւն է, աղջը ա'լ, կառավարութիւնը ա'լ: Հարց՝ «Ուրեմն կառավարութիւն ասելով, պիտի իմանալ որ և է աշխարհի պաշտօնեալըր, կամ, նոցա գահերէցըր»: Պատասխան՝ «Ճիշշայ: Այսեղ Մհամարակ ժողովուրդը» հակադրում է մի խուճը մարդկանց որ կառաւարութիւն կամ բռնակալութիւն անունն է կրում: Կառավարութիւնը միշտ էլ բացասական մեծութիւն է ներկայացնում, նա ստեղծւած է ճնշման, իր դուրս սրածութիւն և աւերտծութիւն տարածելու համար. միայն պարզածիտ մարդիկ կարող են հաւատալ այս կամ այն կառավարութեան...»: Այդ տեսակէտից դէպի կառավարութիւնը պիտք է բռնել միանգամայն միտոզական գիրը: Այդպիսով Նալբանդեան թեսկոխում է անարխիզմի վալը. Բականինի աղջեցութեան հետեւնք է դա: Ճնշւածների ձայնը և ժամանակի քաղաքական կազմը նրան թելալը են, որ եւրոպական պետութիւնները լետադիմական դեր են կատա-

\* ) «աղջ» ասելով նալբանդեան հասկանութ է բռն ժողովուրդը, հարստահարւած ժամանակ, «հասարակ ժողովուրդը», այլ խօսքով՝ զեմոկթատիտն, բառի ամենալայն իմաստով:

բում կեանքում. բայց Նալբանդեան գնացել է հեռու. նա, փօխանակ հարցին յարաբերականութեան տեսակէտից նովելու նայել է բացաբակ ախոցներով և ընկել ծալրայեղութեան մէջ՝ դառնալսվ մետաֆիզիկ անարիխսա:

Ալսքան նրա քաղաքական թէօրիայի մասին: Գործնականում նա ըստ երևոյթին կողմնակից է եղել յեղափոխական տակարկին՝ դարձւածքի սովորական իժաստով. այն մտածել է նո կիրառել դոնէ տաճկահայ կեանքում: Տաճկահայերի անկախութեան պրօբեմը Նալբանդեանին զբաղեցրել է. այդուղիութեամբ նա աշխատանք է տարել Լօնգոնում՝ յեղափական ների շրջանների շրջաններում: Վերջիներս աշխատել են օդագործել երան և յօդուտ ուստաստանեան յեղափոխութեան, դոնէ «Երկրագործութեան» ողջ վերջին մասը և այն չտորը, որ լեզար կերպով մինչեւ այժմս լոյս չի տեսել, այդ են աշխատում: Վերջապէս, այդ իսկ պատճառով էլ նա վոանդւեց:

## IV

Սրանք են Նալբանդեանի էական գաղափարները, որ մենք աշխատեցինք հարեւնցօրէն ընդգծել: Այժմ ամփոփենք: Կեղում է Նալբանդեանի փիլիսոփայական տեսակէտը, խախուտ է նրա սօցիօլոգիական կօնցեացիան, թերի ու հակասական են նրա սօցիալ-տնտեսական ու քաղաքական գաղափարները: Դիալեկտիկա ու մետաֆիզիկա. մատերիալիզմ ու իդեալիզմ. գիտութիւն և ուսուպիա: Այլ կերպ չեր էլ կարող:

Հայ գեմօկրատիան ընդհանրապէս, որ 60-ական թւականներին համեմատաբար տւելի դրական ու պրօդրեսիւ մեծութիւն է եղել, մնել է Միքայէլ Նալբանդեանին, որի գողափարները ունին իրանց բոլոր բացասական գծերի հետ միասին և զրական կողմերը: Նալբանդեան շարունակ ելնում է մի կէտից՝ գիտութիւնից, որ մատերիալիզմն է, ուստի և զրական կայանից: Բայց մեկնելով նրանից, մեր հեղինակը յանդում է ուսուպիալից, որ մանր-բուրժուական իգէօլոգիալին է յատուի:

Վաթսունական թւականների մի հայ գրող, այն ժամանակ, երբ հայ կեանքում հասարակական զիվերենցիացիան շատ աննշան է եղել, երբ իրականութիւնը եղել է նապաղ մանրուրգերական—թէկ արդէն գործում էր առևտրական կատալլք և նա ձդտում էր վերածւելու արդիւնազորժականի—մի հայ գրող, որ գտնւել է երոպական ու ռուսական մի շարք պօղիաթվիստ մտածողների աղջեցութեան տակ, որոնք շրանը էլ տակաւին չէին հասել ժամանակակից մատերիալիզմի իսկան բարձրութեան—մի կողմից Զերնըշևկի: ու Բեմի իսկան բարձրութեան—մի կողմից Պրուգոն, Սէն-Սիմօն, Հերցէն ու նալինսկի, միւս կողմից՝ Պրուգոն, Սէն-Սիմօն, Հերցէն ու նամանաւանդ Բակունին, —հասկանալի է, այդպիսի մի գրող պէտք է ունենար թերութիւններ, պէտք է կը բայ ժամանակի կնիքը:

Այսուեղ է, որ մենք պէտք է տեսնենք Նալբանդեանի պատմական արժանիքը. եւ այդ արժանիքը այնքան մեծ է. որքան երկար է այն տարածութիւնը, որ բաժանում է մեղ Նալբանդեանի էպօխալից: այդ արժանիքը այնչափ բարձր է, որքան որ ներկայումս քառակեսուի գլխի տէր մարդիկ շարունակում են որտեղի ազգարարակին սօցիալիզմը, —իմաստալի՝ վաթսունական թւականներին և անհեթեթ՝ մեր օրերում:

Միքայէլ Նալբագեանի նշանակութիւնը և խոշոր է. այն մեծ է այն աստիւճան. որ Նալբանդեանը իր շրջանի գրողների շարքում մի եղակի գէմք է շնորհիւ հայ նղնիմ գրողների շարքում մի եղակի գէմք է շնորհիւ հայ նղնիմ գրողների շնորհիւ հայ նղնիմ գրողների, նամանաւանդ շնորհիւ իր գաղափարների գրական տարբերի, որոնք մինչեւ այժմ չել չեն կորցրել իրանց թարմութիւնը:

Եւ այօքանն էլ բաւական է, որպէսզի հայ մտաւորականութեան ձախակաղմեան թեն ու հալութեան պրօլետարական տարբերն ալսօր երտխտաղիտօրէն ծունը չոքին խոշոր գրողի լիշտակի առաջ:

Իսկ հայ բուրժուազիալի զինակիցը նա չի կարող հաշտուել. հա՛ եթէ բուրժուազիան ուղարկ է, թող պարծենալ առաջին շրջանի նալբանդեանով, որ իսկապէս առած, մեր

զրողի ստւերն է միայն: Առենք, հայ բուրժուական միացյալ ինքը արդէն ձեռք է քաշել Նալբանդեանից, իր խոշար ներկայացուցիչներից մեկի՝ Ս. Նազարեանցի՝ բերանով Գիլբրտերական յայտաքարութիւնն անելով նրա մոսին, թէ «Միւս հերոսի գործունէ ութիւնը լիմար անձնապատճենութիւն, և անձնառէր ապս տամրութիւն է. 70 միջիօնի առաջը կտրել, էշի նահատակ գառնալ, ոչ այդ անհանու է ինձ... գործը ոչինչ հայեացը չունի գեափի մեր ազգը... այլ մի օդից առած ցնորը է — խոսվութիւն և ապստամբութիւն ձգելու ախմար ամրօխի մէջ»:

1910, Հոկտեմբեր  
Մոսկավ:



- III
- 30) ՊԵԽԵԿՈՒՐԱ, «ԹԹԱԼԱՄԻ ԲԱԺԱՌՈՒՄԸ»—զինը<sup>1</sup> 1 ր.

31) Ա. ԿԱՐԻԿԵՆՅԱՅ, «ԽԵՂԵՐԱԼԱԼԾՈՅ» և ԱՐՄԵՆԻԱ—զինը<sup>3</sup> 3 ր.

32) «Վարմիր աստի»—զինը<sup>50</sup> կ.

33) Կ. ԼԵՆԻԿ, «Թայ պալամ» կուսակցութիւնները Ռուսաստանում եւ պրո-  
արհանքի վերաբերմաքը»

34) ՎՐԱՀԵՆՈՐԴ Լիբէդինա. «Սաղղեր ու ծանծեր»—զինը<sup>1</sup> 1 ր.

35) ՎՐԱՀԵՆՈՐԴ Լիբէդինա. «Սաղղեր ու ծանծեր»—զինը<sup>1</sup> 1 ր.

36) Վ. ԿԵՐՄԵՆՑԵԼԻ, «ԽՆԱՂԱՍՑԲՈՒՆԻՆ ԻՇՔՎԵԽ են ծՆՉՈՒՄ իրենց իշխա-  
թեան տակ գոնուող զինացիներին—զինը<sup>3</sup> 3 ր.

37) Ե. Ա. ՊՐԻՈՐԱՎԵՇՆՈՍԻՒ, «ԳԻՂԱՑԲԱԼԱՄ ԿՈՒՄՈՒՆԱՆԿԻՐԻ մասին»—  
զ. 1 ր. 50 կ.

38) Կ. ՀԱՅԿՈՒՆԻ, «ՊՐՈԼԻՏԱՊԱԼԱՄ յիշափոխութիւնը և ԱՐՄԵՆԻԱյի բու-  
նվելու»—զինը<sup>3</sup> 3 ր.

39) Կ. ՀԱՅԿՈՒՆԻ, «ԼՂՋՈՒԹԻՒՆՆԵՐԸ ինքնորոշումն եւ Կումունիստիւնուր»—  
զ. 1 ր. 50 կ.

40) Ա. ԿԱՐԻԿԵՆՅԱ, «ԿՈՎՀԱՍԻԱՆ պրոլիտարիատի պատմութիւնից—Կազի  
մէջ եւ Ազգաբեկով»—զինը<sup>2</sup> 2 ր.

41) «ՎԱՐԴԵՐ Առող» (իրեղորդ հրատարակութիւն) —զինը<sup>50</sup> կ.

42) «Ի՞նչ է ամել ակտուալիտեան յիշափոխութիւնը»—զինը<sup>1</sup> 1 րուր.

43) Վ. Ի. ՌՈԴԻՇԽՈՎ, (Լինի) Հանուու կոնսազրութիւն (պատկերով)  
վինը<sup>1</sup> 1 ր.

44) ԲԱԽՈՒՆ ՀԱՅԱ, «Վարմիր Բաժնակ»—զինը<sup>3</sup> 3 ր.

45) ԱԱՑԻՆ, Ի՞նչ բան է կոմինան—զինը<sup>1</sup> 1 րուր.

46) ԹԻՑ, Դիմական կոմինան—զինը<sup>1</sup> 1 րուր.

47) Վ. ՏԵՐԵՆԻ, «Ի՞նչ է ասում Լինինը զինացիներին»—զինը<sup>2</sup> 2 րուր.

48) ՄԻՄՈՒՄՈՒՄԻՒ, «Խմելիրալեզմ»—զինը<sup>2</sup> 2 ր.

49) Ա. ՄԻՄՈՒՄՈՒՄԻ, «Էլգայային նարցի առթիւ»—զինը<sup>3</sup> 3 րուր.

50) Ա. ԿԱՐԻԿԵՆՅԱ «Կովհասիան պրոլիտարիատի պատմութիւնից 2 Ավե-  
ճակարիձ»,—զինը<sup>3</sup> 3 րուր.

51) Ա. ԿԱՐԻԿԵՆՅԱ, «Հայաստանի սպազման»—զինը<sup>3</sup> 3 րուր.

52) «Բագրի 26 կոմինար-մնկների լիշտուակն».

53) ԵՐԵՎԱՆ, ԼԱՄԱ, «Երկու մայ» պատմիեր.

55) Ա. ՄԱՐՏՈՒՐԻ, Միքայէլ նալբանդիկան»—զինը<sup>3</sup> 3 րուր.

56) «Հայքինիր վերապրծած զիրինիրին» Ողջոյն Խորթրային Ռուսաստա-  
ն—զինը<sup>1</sup> 1 ր.

57) Ե. ԵՐԱՐՈՒԹԵԱՄԻՒ, Կայքին ու Արդին» (Ա. Ելենելը եւ Կարէ Լիքինիստ-  
որ) —զինը<sup>1</sup> 1 ր.

58) ՊԱՆԵԿՈՒՐ Կոմինակից եւ Դէմիկատիզմ—զինը<sup>1</sup> 1 ր.

59) ՄԵՐԱԼԻՆ Հոկտեմբերին յիշափոխութիւնը եւ պազային նարցը—զինը  
յուր.

60) ԿՕՆԿՈՒ, Փարիզի կոմինան—զինը<sup>3</sup> 3 րուր.

61) Ռուսաստանի Սոցիալիստական Փեղերատի Խորթրային Հանրապե-  
տեան Սահմանադրութիւնը: Զբաց քատարակ, —զինը<sup>2</sup> 2 րուր.

62) \* \* Անգլիական ինպարիալիզմ եւ Աբենելը:

Պատրաստ են տպագրութեան համար՝

- 1) Ն. ԼԵՒՆ. Պետովին և յնդափսութիւն
- 2) Ն. ԼԵՒՆ. Իմպերիալիզմ.
- 3) Կ. ՄԱՐՔՍ. Յեղափոխութիւնը և հակայեղափոխութիւնը Գերմանիայում:
- 4) Կ. ՄԱՐՔՍ. Քաղաքացիական պատերազմը Փրանսիա ու մի:
- 5) ԿԱՌԻՑԿԻ. Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը:
- 6) ՊԼԵՏՈՆՈՎ, Մարքսիզմ հիմնական իմունիթեա:
- 7) ՊՈԵՐՈՎԾԿԻ. Ցարիզմ ու յնդափոխութիւն.
- 8) Պ. ԱԶԹԱՐԴԻ. Բոլժուազիայի հայրենասիրութիւնը:
- 9) ԿՈԼՈՆՑԱՅ. Հստանիք և կոմմոնիստական հասարակութիւն:
- 10) ՏՐՈՅԿԻ. Հոկտեմբերեան յնդափոխութիւնը:
- 11) ԿԱՄԵՆԵՎ. Իմպերիալիզմ և Բալկաննեան Հանրապետութիւնները:
- 12) ԼԻԲԿՆԵԽ. Երթու աշխարհ:
- 13) ԿՐՈՒՊՇԿԱՅԱ. Ժողովրդական կրթութիւնն ու գէնեկրատիան:
- 14) ՏՐՈՅԿԻ. Ժան Ժօրէս:
- 15) ՓՐ. ԷՆԻԵԼԸ. Կոմմոնիզմը սկզբունքները (Կոմմոնինիստական Մանեֆեստի նախնական խմբագրութիւնը):

---

Գինն է՝ 3 բուր.

---



70-266